ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԹՈՐԳՈՄԻ, ԹՈՐԳՈՄԱՆՑ, ԹՈՐԳՈՄԱՆՑ ՏԱՆ-ՄԱՍԻՆ

Գ. Ա. ՋԱՆՈՅԱՆ

Հայկական, վրացական պատմագրության մեջ կան մի շարք վկայություններ Թորգոմի, Թորգոմանց և Թորգոմանց տան մասին։ Այդ վկայություններն իրենց իմաստով և բովանդակությամբ հանգում են միևնույն մտքին՝ Թորգոմը հայերի, աղվանների, վրացիների նախահայրն է։ Թորգոմի զավակներն են Հայկը, Քարթլոսը, Աղվանոսը, ինչպես նաև կովկասյան մյուս ժողովուրդների նահապետները։

Ագաթանգեղոսը իր «Պատմություն Հայոց» գրքի առաջաբանում, խոսելով Գրիգոր Լուսավորչի գործունեության մասին, գրում է. «Կարդալով Ավետարանի աստվածապարգև ավետիսները և կենաց խոսքի մեր Թորգոմյան ազգին և մեր Հայաստան աշխարհում քարոզելու (գրվածքը), թե ինչպես կամ ինչպիսի մարդու կողմից այն կամ ո՞վ էր նա, որ այս նորոգատուր առաքելական շնորհները իր վրա վերցնելով երևան եկավ այսպիսի աստվածեղեն շնորհքով, կպատմենք նրա լուսավոր վարդապետության և հրեշտակակրոն առաքինի վարք ու բարքի, ազնվական համբերության մասին այն շնորհալի մեծազոր նահապետի, որը Քրիստոսի խոստովանողը եղավ և ճշմարտության վկան»[1]։ Այնուհետև՝ «...Արարատյան նահանգում, Թագավորանիստ կայանում Հայոց Թորգոմյան տանը բխեցին Աստծո պատվիրանների Ավետարանի քարոզության շնորհները»[2]։ Ապա՝ «Արանք են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, կողմնակալները, հազարապետները, բյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը և ուղարկեց Կապուտկացոց կողմերը...»[3]։

Ինչպես տեսնում ենք, Ագաթանգեղոսը Հայաստան աշխարհը նույնացնում է Թորգոմանց տան հետ։

Փավստոս Բուզանդը իր «Հայոց պատմության» «Նախագիտելիք» հատվածում մեկնաբանելով երրորդ դպրության բովանդակությունը, գրում է. «Պատմությունների այս երրորդ դպրությունը պարունակում է պատմական գրվածքների գլուխներ, և նրան կից կան ուրիշ երեք դպրություն, այսինքն, սրանք չորսն էլ մատյան են և չորսն էլ նույն անցքերի հիշատակարաններ, որոնք հիշեցնում են Հայաստան աշխարհի Թորգոմի որդոց պատմությունը»[4]։ Մեկ այլ տեղում («Պատմություն քսան և մի գլուխներից») նա գրում է. «Ինչ որ Թորգոմի որդոց Հայաստան աշխարհում տեղի ունեցավ Թադևոս առաքյալի քարոզությունից հետո»[5]։

Փ. Բուզանդը «Պատմության» հինգերորդ դպրության գլուխները վերնագրում է. «Թորգոմի որդոց տան՝ հայոց աշխարհի պատմության գլուխներ»[6]։ Ուրեմն, Բուզանդը ևս Թորգոմի որդիների երկիրը նույնացնում է Հայաստան աշխարհի հետ։

---

1 Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 1977, § 116։ Այս և հետևյալ ընդգծումները մերն են։

2 Նույն տեղում, § 776։

3 Նույն տեղում, § 796։

4 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 7։

5 Նույն տեղում, էջ 235։

6 Նույն տեղում, էջ 285։

Մովսես Խորենացին, խոսելով Հաբեթի որդիների ծննդաբանության մասին, գրում է. «Հաբեթ ծնում է Գոմերին, Գոմեր ծնում է Թիրասին, Թիրաս ծնում է Թորգոմին, Թորգոմ ծնում է Հայկին»[7]։ Այսինքն, Հայկը Հաբեթի ժառանգներից է և Թորգոմի որդին։

Խորենացին պատմում է, որ Հայկը իր շինած առաջին բնակավայրը տալիս է իր թոռ Կադմոսին, «իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով ու տունուտեղով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք և գալիս է բնակվում մի բարձրավանդակ դաշտում, և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն, այստեղ բնակվողները հայեր են Թորգոմի տան սերունդներ»[8]։

Այս վկայություններով Մ. Խորենացին ցույց է տալիս, որ ինքը, իր հետ Եղած մարդիկ և իրենց ժառանգները Թորգոմի տան սերունդներն են։

Պատմիչ Մովսես Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքում հինգ անգամ անդրադառնում է Թորգոմին։ ԺԵ գլխում նա տալիս է Հաբեթի որդիների ծննդաբերությունը. «Հաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ»[9]։ Հետևաբար, Թորգոմը հայ ժողովրդի նախահայրն է։

Խոսելով Գրիգոր Լուսավորչի մասին, Կաղանկատվացին գրում է. «Սրան ընտրեց Աստված իր մոր որովայնից և արգանդում իբրև հաղթող առաջամարտիկի առաքյալ և արժանավոր քահանայապետ հանձնեց Թորգոմյան երկրին, Ասքանազի սերնդին»[10]։

Աշոտ Բագրատունու գահ բարձրանալու առնչությամբ Կաղանկատվացին գրում է. «Այս նույն ժամանակներում՝ 336(887) թ., հաջողվեց Աշոտ Բագրատունուն Հայաստանում բարձրացնել իր թագավորական գահը, երբ երկար ժամանակ թագավորությունը վերացված էր Թորգոմյան տանից (Հայաստանից)»[11]։ Խոսելով Սմբատ Բագրատունի թագավորի՝ արաբական իշխանի կողմից սպանվելու մասին, պատմիչը գրում է. «Բայց այդ բոլորը սկիզբն երկանցն էր այն տագնապի, որ պատահեց Հայաստանին...։ Ապա աղետավոր ձայն հնչեց Թորգոմյան տանը, և ընդհանրապես ավերածություն հասավ Հայաստանին»[12]։

Մովսես Կաղանկատվացու այս վկայությունները ևս հաստատում են, որ Թորգոմյան տուն, Թորգոմաց աշխարհ ասելով հասկացել են Հայաստան աշխարհը։

Վրաց պատմագրության մեջ ավելի ընդարձակ տեղեկություններ կան Թորգոմի մասին։ Վրաց պատմիչները Թորգոմին համարել են հայերի, վրացիների և աղվանների ու կովկասյան մյուս ժողովուրդների նախահայրը։ Դա լավագույնս երևում է Լեոնտիոս Ռուիսեցու (XI դ.) հետևյալ տողերից. «Արանից հետո Քեկապու պարսից թագավորն ուղարկեց Փարշորոտ կոչեցյալ իր որդուն՝ հայոց և վրաց և բոլոր Թորգոմյաններին ընդդեմ։ Իսկ Թորգոմյաններ բոլորը ժողովեցան և դիմեցին Ատրպատական»[13]։ «Հայոց և վրաց, ռանաց (աղվաններ) և մովակաց, հիրաց և լեզգիների, յեգերաց և կովկասաց սոցա բոլորի հայրը մի էր՝ Թորգոմ։ Թորգոմի որդվոց մեջ ութը հայտնի դարձան (իբրև) քաջ ու անվանի հսկաներ, որոնց անուններն են՝ 1. Հայկ, 2. Քարթլոս, 3. Բարգոս, 4. Մովական, 5. Լեկոս, 6. Հերոս, 7. Կավկաս, 8. Եգրոս»[14]։ Լ. Ռուիսեցին գրում է նաև Թորգոմի տիրապետության սահ-

---

7 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, գիրք Ա, գլուխ Ժե։

8 Նույն տեղում, գիրք Ա, գլուխ Ժ։

9 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1959, գիրք Ա, գլուխ Ժե։

10 Նույն տեղում, գլուխ ԺԴ։

11 Նույն տեղում, գիրք Բ, գլուխ ԻԱ։

12 Նույն տեղում։

13 Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 148—149։

14 Նույն տեղում, էջ 143։

մանների մասին։ Ըստ նրա, Թորգոմի տիրույթները տարածվել են Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովը, հարավում Որբեթ լեռից մինչև Կովկասյան լեռները և Սև ծովը. «Նրա երկրի սահմանները այս են. արևելքից՝ ծովն Գուրգանի, արևմուտքից ծովն Պոնտոսի, հարավից՝ լյառն Որբեթի և հյուսիսից՝ լյառն Կովկասու»[15]։

Բացի հայկական, աղվանական, վրացական աղբյուրներից, Թորգոմի և նրա ժառանգների մասին վկայություն կա նաև հին հրեական աղբյուրներում։ Հովսեփոս Փլավիոսը իր «Հրեական հնախոսություն» գրքում գրում է. «Թյուգրամեսը հաստատեց Խյուգրամյաններին, որոնց հելլենները ճիշտ համարեցին փռյուգներ անվանել։ Իսկ Յափեթի որդի Յավանոսը ևս երեք գավակ ունեցավ, որոնցից Հալինասը իր անունը տվեց հաղիսեսցիներին, որոնց վրա ինքն իշխել էր, և որոնք էլ այժմ էոլյաններն են»[16]։ Այս կապակցությամբ գրքի թարգմանիչ, պատմաբան Ս. Կրկյաշարյանը № 127 ծանոթագրության մեջ գրում է. «Թյուգրամեսը նույնական է Աստվածաշնչի Թոգարմա (Թորգոմ) անվան հետ, իսկ Թոգարման (սեպ. Թիլ-Գարիմու) երկիրը ավանդաբար նույնացվում է Հայաստանի հետ»[17]։

Հ. Փլավիոսի վկայությունը հաստատվում է Լ. Ռուիսեցու աշխատությամբ, ուր նա գրում է. «Եվ ժողովուրդը մեծ էր և անհամար, քանի որ էին բաղում կանայք, ուստերք և դստերք, որդիք և թոռներ ուստերաց և դստերաց նորա, և քանի որ նա (Թորգոմն) ապրեց վեց հարյուր տարի։ Բայց Թորգոմի որդվոց մեջ ութը հայտնի դարձան իբրև քաջարի և անվանի հսկաներ»[18]։ Ապա թվում է մեզ հայտնի անունները։ Այս տողերից պարզ երևում է, որ Թորգոմը ունեցել է էլի որդիներ, որոնց անունները մեզ չեն հասել, հետևապես միանգամայն ճիշտ պետք է համարել Հ. Փլավիոսի վկայությունը, որ փռյուգացիները նույնպես Թորգոմի ժառանգներն են եղել։ Կարելի է հավանական համարել նաև, որ Փոքր Ասիայի արևմտյան մասերում նույնպես բնակվում են Թորգոմից սերող ժողովուրդներ։ Այս կապակցությամբ շատ կարևոր է գերմանացի լեզվաբան Հայնրիխ Շտայնի կարծիքը, որը Հերոդոտի պատմության թարգմանիչն է. «Բոլոր հանգամանքները խոսում են ուղղակի այն մասին, որ հայերեն լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ներկայացնելով նրա արևելյան ճյուղը։ Դեռ (արդեն) Գենեզիսում Ասքանազը և Թորգոմը, այսինքն, փռյուգացիները և հայերը, գիտվում են որպես եղբայրներ»[19]։

Հունական պատմագրության մեջ Թորգոմի մասին վկայություն կա Եվսեբիոս Կեսարացու մոտ։ Նա իր «Ժամանակականք» աշխատության մեջ գրում է. «Թորգոմ եւ ի նմանէ Հայկ»[20]։

Առաջին հայացքից Թորգոմի ընդարձակ տիրույթներն ու սահմանները անհավանական են թվում։ Բայց փաստերը հաստատում են այդ։ Վրացիները, աղվանները իր սկզբանե բնակվել են Կովկասում, հայերը՝ Հայկական լեռնաշխարհում, նաև հայտնի է, որ փռյուգացիները բնակվել են Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան մասում։ Ինչպես ասվեց, ըստ Հովսեփոս Փլավիոսի, փռյուգացիների նախահայրը եղել է Թորգոմը[21]։ Այսպիսով, Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովը ընկած տարածքում բնակված ժողովուրդները՝ հայերը, վրացիները, փռյուգացիները իրենց նախահայրերն են համարել Թորգոմին։

---

15 Նույն տեղում, էջ 144։

16 Հ. Փ լ ա վ ի ո ս, Դիոն Կասիոս, Երևան, 1978, էջ 56։

17 Նույն տեղում, էջ 102։

18 Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, նշվ. աշխ., էջ 144։

19 Herodot, Berlin. 1861. S. 76—77.

20 Ժամանակականք երկմասեայ, Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ, հ. Բ, Վենետիկ, 1818, էջ 12։

21 Հ. Փ լ ա վ ի ո ս, նշվ. աշխ., էջ 56։

Այս բոլոր աղբյուրներն ուսումնասիրելով, Ղ. Ալիշանը համոզվել է դրանց ճշմարտության մեջ. «Հայաստանի երեք կողմերու՝ հիւսիսոյ, արևելից շատ ազգերն, ինչուան ու որ հին պատմութեան ծանօթութիւն հասնի, զիրենք կիսոստովանին սերունդք Թորգոմայ...»[22]։ Անշուշտ, դրանք Թորգոմի ժամանակ եղել են նրա տիրապետության տակ։ Սա էլ հաստատում է Լ. Ռուիսենցու վկայությունը Թորգոմի տերության սահմանների մասին։

Վերը բերված աղբյուրները Թորգոմին համարել են հայերի, վրացիների, աղվանների, կովկասյան մյուս ժողովուրդների, ինչպես և փռյուգացիների նախահայրը։ Բայց այս տեղեկությունները որոշ պատմաբաններ չեն ընդունել իբրև հավաստի պատմական վկայություններ և ինչպես Թորգոմին, այնպես էլ նրա ժառանգներին՝ Հայկին, Քարթլոսին, Աղվանոսին և մյուսներին համարել են առասպելական անձնավորություններ, իսկ գործունեությունը՝ առասպել։ Մինչդեռ խեթական և ասսուրական արձանագրությունները վկայում են, որ խեթական և ասսուրական թագավորները պատերազմել են Թոգարմայի հետ և գրավել։ Զանազան առիթներով կրկին անդրադառնալով Թոդարմային, այդ աղբյուրները լիովին հաստատում են Թոգարմայի՝ Թորգոմյան տան պատմական իրողություն լինելու հանգամանքը։

Թոգարմայի մասին պատմության մեջ ամենահին տեղեկությունները գտնում ենք խեթական աղբյուրներում։ Խատտիի թագավոր Սուպպիլուլումայի (մ. թ. ա. 1395—1355) և Միտանիի թագավոր Մատիոսազայի միջև կնքված պայմանագրում Սուպպիլուլուման ասում է. «Խատտու երկրի արքայի Հոր (Խատտուլիլ Բ) ժամանակ Իշուվա երկիրն ապստամբեց։ Խատտու երկրի մարդիկ քաշվեցին երկիրը։ Գուրտալլիշշայի մարդիկ, Առավաննուի մարդիկ, Զազշա երկիրը, Կալամշմա երկիրը, Կառնա լեռներկիրը, Տումիտայի մարդիկ, Աշխա երկիրը, Խուրմա երկիրը, Խաառնա լեռներկիրը, Տեգարամայի երկրի կեսը, Տիպուրզիայի մարդիկ, Խազգաի մարդիկ և Արմատանա երկրի մարդիկ ապստամբեցին իմ հոր ժամանակ»[23]։ Ինքը՝ Սուպպիլուլուման, իր բանակներով հարձակվում է ապստամբած երկրների վրա, հաղթում նրանց ու հնազանդեցնում. «Այն մարդիկ ու երկրները, որոնք իմ հոր ժամանակ գնացել էին Իշուվա երկիրը, Գուրտալիշշայի մարդիկ, Առավանաի մարդիկ, Զազգիշտի երկիրը, Տեգարամայի երկիրը, Կառնա լեռները, Տարմիտաի մարդիկ, Ալխա երկիրը, Խուրմա երկիրը, Խառնա լեռներկիրը, Տեգարգամա երկրի կեսը, Տեպուրդիայի մարդիկ, Արմատանի մարդիկ, այս մարդիկ և այն երկրները, նրանց տերն եղա ես, ես բերի նրանց Խատտի երկրին»[24]։

Խատտի թագավոր Մուրսիլի II-ը (մ. թ. ա. 1353—1325) իր տարեգրության իններորդ տարում կատարած գործերի մասին գրում է. «...Կարգամիս-քաղաք-երկրի գործերը կարգավորելուց հետո, Կարգամիսից դեպի վերև, Թեգարամա-երկիրը ճամփա ընկա։ Երբ Թեգարամա հասա, այնտեղ զորահրամանատար Նուվանցան և զորավարները Թեգարամա քաղաքում ընդառաջ եկան, որտեղ իրար հանդիպեցինք»[25]։

Սուպպիլուլուման իր տարեգրության մեջ պատմում է, որ Մուրսիլի II-ը իր դեմ ապստամբած խուրրիների վրա արշավելու ժամանակ գնում է Թեգարամա, նրա տարածքում զորատես է կատարում և ապա իր որդի Արնուվանդային ուղարկում է խուրրի երկրի վրա՝ նրանց հնազանդեցնելու համար»[26]։

---

22 Ղ. Ալիշան, Հայաստան առաջ քան զՔրիստն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 115։

23 Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1939, էջ 473։

24 Նույն տեղում, էջ 474։

25 Ն. Մարտիրոսյան, Խարբերդի շրջանները՝ Հայոց հնագույն օջախը, Խարբերդ և իր ոսկեղեն դաշտը, Հուշամատյան, Երևան, 1957, էջ 21—27։

26 Տե՛ս В. Н. Хачатрян, Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, с. 95.

Բացի վերը բերված փաստերից, խեթական աղբյուրներում կան այլ վկայություններ ևս Թոգարմայի և նրա հարավ-արևելյան հարևան Իշուվա երկրի միջև տեղի ունեցած ընդհարումների մասին[27]։ Խեթական աղբյուրներից բերված այս վկայությունները ցույց են տալիս, որ գոյություն է ունեցել Թոգարմա քաղաք-երկիրը, որը ապստամբել է խեթական թագավորների դեմ, այնուհետև նրանց կողմից հնազանդեցվել, ու խեթական երկու թագավորներն իրենց զորքերով գնացել են այնտեղ, զորատես կատարել։

Թոգարմա երկրի մասին վկայություններ գտնում ենք նաև ասսուրական աղբյուրներում։ Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (մ. թ. ա. 722—705) Դուր Շառուկինի պալատի դռան արձանագրության մեջ գրում է, որ իր թագավորության տասներորդ տարում Միլիտայի թագավոր Թարխունագին և Կամախի թագավորը ապստամբում են իր դեմ, ինքը բանակով գնում է, գրավում այդ երկրները, կողոպտում և գերեվարում բնակչությանը։ Միլիտայի թագավոր Թարխունագին իր կյանքը փրկելու համար փախչում է Թիլ-Գարիմու։ Սարգոն II-ը բանակով գնում, գրավում է այդ քաղաքը, Թարխունագին և նրա գինակիցներին շղթայում, իսկ նրա ընտանիքն ու քաղաքի բնակչությանը գերեվարում։ Ուրեմն, դեռևս մ. թ. ա. 712 թ. Սարգոն II-ի ժամանակ Մելիտինեից ոչ հեռու գոյություն ուներ Թոգարմա քաղաք-երկիրը[28]։

Սարգոն II-ի կողմից Թոգարման ավերվելուց շատ ժամանակ չանցած, այդ քաղաք-պետությունը վերականգնվում է և իր մեջ ուժ է գտնում Սարգոն II-ի որդի Սենեխերիբ թագավորի (մ. թ. ա. 705—681) դեմ կրկին ապստամբելու։ Սենեխերիբն իր թողած արձանագրության մեջ հաղորդում է, որ Թիլ-Գարիմը ապստամբում է իր դեմ։ Ինքը բանակով գնում է Թիլ-Գարիմ, գրավում է, գլխատվին ավերում այն, իսկ բնակչությունը բնակեցնում երկրի տարբեր կողմերում, որպեսզի Թիլ-Գարիմի անունը իսպառ ջնջվի երկրի երեսից[29]։

Ասսուրական արձանագրությունները հաստատում են խեթական աղբյուրներում նշված Թոգարմա քաղաք-երկրի լինելության փաստը և ցույց են տալիս, որ այն կործանվել է մ. թ. ա. VI դ. սկզբին, նրա բնակչությունը տեղափոխվել է երկրի տարբեր մասերում բնակեցվելու համար։ Սակայն Թոգարմայի անունը չանհետացավ երկրի երեսից. «Մելիտայի թագավորությունը ոչ միայն գոյություն ուներ, այլև բավականին հզորացել էր։ Ընդ որում, շատ հավանական է, որ Մելիտայում իշխող նոր դինաստիան ծագում էր Թոգարմայից»[30]։

Եզեկիելը (մ. թ. ա. VI դ.) հաղորդում է, որ Մարաստանի դեմ պատերազմում Լիդիան ստեղծում է դաշնակցություն։ Նրան դաշնակից էին Եգիպտոսը, Գամիրքը և Տուն-Դոգարման[31]։

Այսպիսով, մենք լիակատար փաստեր ունենք ասելու, որ Թոգարմա-Թիլ-Գարիմու պետությունը գոյություն է ունեցել սկսած ամենահին ժամանակներից մինչև մ. թ. ա. VI դ. սկիզբը։

Թոգարմա-Թիլ-Գարիմու քաղաք-երկրի մասին տեղեկություններ կան նաև Աստվածաշնչում։ Աստվածաշնչի Ծննդոց գրքում ասված է. «Հաբեթի որդիքը՝ Գոմեր, Մագոգ, Մադայ, Յավան, Թոբել, Մեսեք, Թիրաս։ Գոմերի որդիքը՝ Ասքանազ, Բափիաթ և Թորգոման»[32]։ Ըստ այդ վկայության, Թոր-

27 Տե՛ս, օրինակ, Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ գրքի մեջ, Վիեննա, 1947, էջ 212, В. Н. Хачатрян, նշվ. աշխ., էջ 96։

28 И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, № 46 [(այսուհետև՝ АВИИУ): Вестник древней истории, 1952, № 2]; նույնի՝ Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 167—168.

29 Նույն տեղում, էջ 159։

30 Նույն տեղում, էջ 182։

31 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 179։

32 Աստվածաշունչ, Լոնդոն, 1960, Գիրք Ծննդոց։

գոմը Հաբեթի թոռն է։ Հաբեթի որդիների ծննդաբանությունը նույնությամբ կրկնվում է Աստվածաշնչի Մնացորդաց գրքի Ա գլխում։ Եզեկիելի մարգարեության. «Ողբ Տյուրոսի վրա» հատվածում ասված է՝ «Յավանը, Թոբելը և Մեսեքը քո վաճառականներն էին. նրանք քեզ հետ մարդկանց հոգիների և պղնձի անոթների առևտուր էին անում։ Թորգոմայի տանից ձիեր ու ձիավորներ և ջորիներ էին բերում քեզ մոտ իբրև ապրանք»[33]: Այս վկայությունից հետևում է, որ Թորգոմա տունը եղել է մի երկիր, որտեղից Միջերկրականի ափին գտնվող Տյուրոս առևտրական նավահանգստային քաղաքն են արտահանվել ձիեր ու ջորիներ։

Եզեկիելի մարգարեության մի այլ հատվածում կարդում ենք. «Գոգը կհարձակվի Իսրայելի երկրի վրա և կչարդի... Եվ Տիրոջ խոսքը եղավ ինձ ասելով Որդի մարդո, երեսդ դեպի Գոգն արա, Մագոգի երկրում՝ դեպի Ռոշի, Մոսոյի և Թոբելի իշխանը և մարգարեացիր նորա վրա և ասիր. այսպես է ասում Տեր Եհովան։ Եվ քեզ ետ պիտի դարձնեմ և կարթեր պիտի դնեմ քո կզակներին և քեզ պիտի հանեմ և քո բոլոր զորքը՝ ձիերն ու ձիավորները, բոլոր շքեղությունով հագված վահանավորների ասպարակիրների մեծ ժողովքը, որոնք ամենքն էլ սուր բռնողներ են։ Պարսիկները, եթովպացիները, փյուգացիները նրանց հետ, ամենքն էլ ասպարակիր և սաղավարտավոր։ Գոմերը և նրա բոլոր գնդերը՝ Թոգարմայի տունը, հյուսիսի ծայրից և նրա բոլոր գնդերի շատ ժողովուրդներ քեզ հետ»[34]։ Ուրեմն, Թորգոմա տուն երկիրը ունեցել է բազում գնդեր, որոնք ի վիճակի են եղել նվաճել Իսրայելի երկիրը։

Արդ, հաստատենք, որ խեթական աղբյուրներում հիշատակված Թեգարման, ասսուրական աղբյուրներում Թիլ-Գարիմուն, Աստվածաշնչի Թոգարմա տունը նույնն են, ինչ հայկական, վրացական, աղբյուրներում հիշատակված Թորգոմա տունը, և ցույց տանք այդ քաղաք-պետության աշխարհագրական տեղը Հայկական լեռնաշխարհում։ Այս հարցերին հանգամանորեն անդրադարձել է Ի. Դյակոնովը[35]։ Այդ Թոգարման նա տեղադրում է Հայկական լեռնաշխարհում, այժմյան Թոխմախ-Սու գետի ստորին հոսանքում, այդ գետի՝ Եփրատի մեջ թափվելու վայրից փոքր-ինչ արևմուտք, որն ընկած է Մելիտինեից հյուսիս։ Թոգարմայի տեղում այժմ Գյորուն գյակավայրն է"։

Ն. Հարությունյանը գտնում է, որ սեպագիր արձանագրություններում հիշատակված Թիլ-Գարիմու-Թեգարման նույնն են, ինչ որ Աստվածաշնչի Թոգարման և համապատասխանում են Մովսես Խորենացու Ազգ տանն Թորգոմայիի[37]։ Թոգարման նա տեղադրում է Մելիտայի հարևանությամբ Տաբալի տարածքում, որը նույն վայրն է, ինչ ցույց է տվել Դյակոնովը։ Վ. Խաչատրյանը գրում է, որ Թեգարմա քաղաքը վաղուց նույնացված է ասսուրական աղբյուրների Թիլ-Գարիմուի և Աստվածաշնչի Թոգարմայի, իսկ հետագայում հայկական «Տանն Թորգոմյան» հասկացության հետ։ Նա «Թոգարմա քաղաքպետությունը տեղադրում է Իսուվա երկրի, Խուրի երկրի, Կիցումանայի և Սամուխա քաղաքի միջև[38], որը մոտավորապես նույն տեղն է, ինչ ցույց է տվել Դյակոնովը։

Այսպիսով, Ի. Դյակոնովի, Ն. Հարությունյանի և Վ. Խաչատրյանի կարծիքները համընկնում են՝ ասսուրական աղբյուրներում հիշատակված Թիլ-Գարիմուի տեղանունները, որոնք ընկած են Հայաստանից մինչև Մելիտինե,

---

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 И. М. Дьяконов. Նշվ. աշխ., էջ 180—181։

36 АВИИУ, № 46, прим. 53.

37 Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 184..

38 В. Н. Хачатрян, Նշվ. աշխ., էջ 94—96։

առնչվում են հայերի ցեղանուններին։ Պարզ է դառնում, որ հենց այստեղ է գտնվել հայ ժողովրդի կազմավորումը սկզբնավորող ցեղերի նախնական բնակավայրը։

Թոգարմայի տեղադրության մասին այս կարծիքները ամփոփում և հաստատում է ակադ. Գ. Մարգսյանը։ «Թոգարմային հարում էր նրա հետ սերտորեն կապված Մալդիան (ասսուր. Մելիդ, ուրարտ. Մելիտեա, անտիկ՝ Մելիտինե, արդի՝ Մալաթիա) Եփրատի արևմտյան ափին։ Նախքան հայերին «արմենացիներ» անվանելը հույներն ըստ երևույթին նրանց կոչել են մելիտինացիներ, թերևս հայկական հնագույն պետական կազմակերպություններից («Թոգարմայի տուն», «Տուն Թորգոմայ») կենտրոնի անվամբ, պետություն, որի առկայությունը այստեղ ենթադրում է Ի. Դյակոնովը»[39]։ Եվ ապա ավելացնում է. «Այսպիսով, վերին Եփրատի հովտի երկրները, սկսած հյուսիսում ընկած Հայասայից մինչև հարավում ընկած Մելիտինեն, համատարած կերպով առնչվում են հայերի ցեղանուններին։ Պարզ է դառնում, որ հենց այստեղ է գտնվել հայ ժողովրդի կազմավորումը սկզբնավորող ցեղերի նախնական բնակավայրը»[40]։

СРЕДНЕВЕКОВЫЕ ИСТОЧНИКИ О ТОРГОМЕ, ТОРГОМАХ, ДОМЕ ТОРГОМОВ

Г. А. ДЖАНОЯН

Резюме

Согласно данным армянских и грузинских исторических источников, отцом Хайоса, Картлоса, Раноса и родоначальников других кавказских племен являлся Торгом, разделивший свою страну Тогарму—дом Торгома между сыновьями и назначивший правителем над ними Хайка. Хеттские, ассирийские источники свидетельствуют о том, что хеттские и ассирийские цари воевали с Тогармой, захватили ее. Древнееврейские источники, особенно Библия, утверждают, что Тогарма имела торговые сношения с средиземноморским портом. Тир. Исследователи И. Дьяконов, В. Хачатрян и Н. Арутюнян локализуют страну Тогарма в районе с севера Мелитине.

MIDIEVAL SOURCES ABOUT TORGOM, TORGOMS, THE HOUSE OF TORGOMS

G. A. DJANOYAN

Summary

According to the facts of Armenian and Georgian historical sources, Torgom was the father of Hayos, Kartlos, Ranos and ancestors of other Caucasian tribes, dividing his country Togarmu-house of Torgom into his sons and appointing Haik as the governer above them. Hett, Assyrian sources testify, that Hett and Assyrian kings struggled with Togarma, captured it. Old Jewish sources, especially the Bible, confirm, that Togarma had trade relations with Mediterranean port Tir. The researchers I. Diakonov, V. Khachatrian and N. Harutjunian localize the country Togarma in the region from the North of Melitine.

---

39 Բ. Առաքելյան, Գ. Ջահուկյան, Գ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1969, էջ 54։

40 Նույն տեղում, էջ 52—54։